ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Արմավիրի մարզի Արգավանդ համայնքի ղեկավարը հայտարարում է մրցույթ՝ Արգավանդի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի /ծածկագիր 1.2-1/ համայնքային ծառայության թափուր պաշտոնն զբաղեցնելու համար:

Աշխատակազմի քարտուղարը.

1) Ապահովում է աշխատակազմում «Համայնքային ծառայության մասին» օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով աշխատակազմի կառավարման հետ կապված գործառույթների իրականացումը,
2) Կազմակերպում է աշխատակազմի գործավարությունը, նամակագրությունը, արխիվային գործը, ղեկավարում է աշխատակազմի տեխնիկական սպասարկման աշխատանքները,
3) Իրականացնում է համայնքի ավագանու նիստերի նախապատրաստումը, արձանագրումը և ապահովում է նիստին ներկա ավագանու անդամների կողմից արձանագրության վավերացումը,
4) Կազմակերպում է համայնքի ղեկավարի որոշումների, կարգադրությունների նախագծերի նախապատրաստումը,
5) Կազմակերպում է համայնքի ղեկավարի և ավագանու անդամների կողմից քաղաքացիների ընդունելությունն ու հսկողություն է իրականացնում նրանց առաջարկությունների, դիմումների և բողոքների քննարկման ու ընթացքի նկատմամբ,
6) Վերահսկողություն է իրականացնում համայնքի ղեկավարի և ավագանու որոշումների կատարման, ինչպես նաև աշխատակազմի աշխատանքային կարգապահական ներքին կանոնների պահպանման նկատմամբ,

Աշխատակազմի քարտուղարն ունի պաշտոնի անձնագրով սահմանված այլ իրավունքներ ու պարտականություններ:

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է բարձրագույն կրթություն, համայնքային ծառայության առնվազն առաջատար պաշտոնների 2-րդ ենթախմբի պաշտոններում կամ դրանց համապատասխանող՝ պետական ծառայության պաշտոններում առնվազն երկու տարվա ստաժ կամ առնվազն հինգ տարվա համայնքային ծառայության ստաժ և համայնքային ծառայության 2-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճան կամ առնվազն հինգ տարվա հանրային ծառայության ստաժ և համայնքային ծառայության 2-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճանին համապատասխանող՝ պետական ծառայության դասային աստիճան /կոչում/ կամ վերջին չորս տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն երկու տարվա աշխատանքային ստաժ կամ վերջին ութ տարվա ընթացքում համայնքի ավագանու անդամի աշխատանքային գործունեության առնվազն երեք տարվա փորձ կամ գիտական աստիճան և առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, կամ առնվազն 5 տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ: Մինչև 2018 թվականի հունվարի 1-ը՝ համայնքային ծառայության, պետական և /կամ/ համայնքային կառավարման ոլորտի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ:

Սույն պաշտոնի անձնագրի 10-րդ կետի «բ» ենթակետում նշված իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն:

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար հայտարարված մրցույթը կկայանա 2016 թվականի սեպտեմբերի 8-ին՝ ժամը 12.00-ին՝ Արգավանդի համայնքապետարանի շենքում:

Դիմող ՀՀ քաղաքացիները Արգավանդի համայնքապետարանի աշխատակազմ կամ Արմավիրի մարզպետարան պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.

-Դիմում մրցութային հանձնաժողովի անունով /ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս/

-տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի պատճենները՝ բնօրինակների հետ միասին.

-հայտարարություն այն մասին, որ ինքը չի տառապում ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 15-ի N 1801-Ն որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված հիվանդություններից որևէ մեկով.

-հայտարարություն այն մասին, որ ինքը դատական կարգով չի ճանաչվել անգործունակ կամ սահմանափակ գործունակ.

-արական սեռի անձինք՝ զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասային կցագրման վկայականի պատճենները.

-մեկ լուսանկար՝ 3x4 չափի.

-անձնագրի պատճեն:

Մրցույթին մասնակցել ցանկացող ՀՀ քաղաքացիները լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաև պաշտոնի անձնագրին և հարցաշարին ծանոթանալու համար կարող են դիմել ՀՀ Արմավիրի մարզի Արգավանդի համայնքապետարան կամ ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչություն /հասցե ՝ ք. Արմավիր, Խ. Աբովյան 71, հեռ 0237 2 07 70, 0237 2 76 49/:

Փաստաթղթերը ընդունվում են ամեն օր ժամը 10.00-ից 16.00-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Դիմումների ընդունման վերջնաժամկետն է 2016 թվականի օգոստոսի 24-ը:

Հեռ.՝ 0237 96-2-32

Էլ. փոստ՝ argavand.armavir@mta.gov.am

Հասցե՝ ՀՀ Արմավիրի մարզ, գ. Արգավանդ 1-ին փողոց թիվ 39